ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

Ի. Վ. ՍՏԱԼԻՆԻ

ԵԼՈՒՅԹԸ ՌԱԴԻՈՅՈՎ

1941 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 3-ԻՆ

Ընկերնե՛ր, քաղաքացինե՛ր, եղբայրնե՛ր եվ քույրե՛ր, մեր բանակի եվ նավատորմի մարտիկնե՛ր։

Ձեզ եմ դիմում ես, իմ բարեկամնե՛ր։

Հիտլերյան Գերմանիայի ուխտադրուժ ռազմական հարձակումը մեր հայրենիքի վրա, որ սկսվեց հունիսի 22-ին, շարունակվում է։ Չնայած Կարմիր Բանակի հերոսական դիմադրությանը, չնայած որ թշնամու լավագույն դիվիզիաներն ու նրա ավիացիայի լավագույն զորամասերն արդեն ջախջախված են և իրենց գերեզմանն են գտել մարտի դաշտերում, թշնամին շարունակում է առաջ խցկվել, նոր ուժեր նետելով ֆրոնտը։ Հիտլերյան զորքերին հաջողվել է գրավել Լիտվան, Լատվիայի մի զգալի մասը, Իելոռուսիայի արևմտյան մասը, Արևմտյան Ուկրաինայի մի մասը։ Ֆաշիստական ավիացիան ընդլայնում է իր ռմբակոծիչների գործողության շրջանները, ռմբակոծության ենթարկելով Մուրմանսկը, Օրշան, Մոգիլյովը, Սմոլենսկը, Ֆիևը, Օդեսան, Սևաստոպոլը։ Մեր հայրենիքի վրա լուրջ վտանգ է կախված։

Ինչպե՞ս կարող էր պատահել, որ մեր փառապանծ Կարմիր Բանակը ֆաշիստական զորքերին հանձնեց մեր մի շարք քաղաքներն ու շրջանները։ Մթթե գերմանական-ֆաշիստական զորքերն իրոք անպարտելի զորքեր են, ինչպես այդ մասին անդադար տարփողում են ֆաշիստական սնապարծ պրոպագանդիստները։

Իհարկե, ոչ։ Պատմությունը ցույց է տալիս, որ անպարտելի բանակներ չկան և չեն եղել։ Նապոլեոնի բանակն անպարտելի էին համարում, բայց նա ջախջախվել է մերթ ռուսական, մերթ անգլիական, մերթ գերմանական զորքերի կողմից։ Վիլհելմի գերմանական բանակն էլ առաջին իմպերիալիստական պատերազմի ժամանակ անպարտելի բանակ էին համարում, բայց նա մի քանի անգամ պարտություն կրեց ռուսական և անգլո-ֆրանսիական զորքերի կողմից, և ի վերջո ջախջախվեց անգլո-ֆրանսիական զորքերի կողմից։ Նույնը պետք է ասել Հիտլերի այժմյան գերմանա-ֆաշիստական բանակի մասին։ Այդ բանակը դեռ լուրջ դիմադրության չէր հանդիպել Եվրոպայի մայր-ցամաքում։ Միայն մեր տերիտորիայում նա լուրջ դիմադրության հանդիպեց։ Եվ եթե այդ դիմադրության հետևանքով գերման-ֆաշիստական բանակի լավագույն դիվիզիաները ջախջախվեցին մեր Կարմիր Բանակի կողմից, ապա այդ նշանակում է, որ հիտլերյան ֆաշիս-

տական բանակը նույնպես կարող է ջախջախվել և կջախջախվի, ինչպես ջախջախվեցին Նապոլեոնի և Վիլհելմի բանակները։

Ինչ վերաբերում է այն բանին, որ մեր տերիտորիայի մի մասն այնուամենայնիվ գրավվեց գերմանա-ֆաշիստական զորքերի կողմից, ապա այդ բացատրվում է գլխավորապես նրանով, որ ֆաշիստական Գերմանիայի պատերազմը ՍՍՌՄ-ի դեմ սկսվեց գերմանական զորքերի համար նպաստավոր և սովետական զորքերի համար աննպաստ պայմաններում։ Բանն այն է, որ Գերմանիայի, որպես պատերազմող երկրի, զորքերն արդեն ամբողջովին մոբիլիզացիայի էին ենթարկված, և Գերմանիայի կողմից ՍՍՌՄ-ի դեմ նետված ու ՍՍՌՄ-ի սահմաններին մոտեցրած 170 դիվիզիաները գտնվում էին լիակատար պատրաստության վիճակում, միայն ազդանշանի սպասելով հարձակվելու համար, մինչդեռ սովետական զորքերը դեռ պետք է մոբիլիզացիայի ենթարկվեին և մոտենային սահմաններին։ Փոքր նշանակություն չունեցավ այստեղ նաև այն հանգամանքը, որ ֆաշիստական Գերմանիան անսպասելի կերպով և ուխտադրժորեն խախտեց իր և ՍՍՌՄ-ի միջև 1939 թվին կնքված չհարձակվելու պակտը, հաշվի չառնելով, որ նա ամբողջ աշխարհի կողմից կճանաչվի որպես հարձակվող կողմ։ Հասկանալի է, որ մեր խաղաղասեր երկիրը, չկամենալով իրեն վրա վերցնել պակտը խախտելու նախաձեռնությունը, չէր կարող բռնել ուխտադրժության ուղին։

Կարող են հարցնել. ինչպես կարող էր պատահել, որ Սովետական Կառավարությունը համաձայնեց չհարձակվելու պակտ կնքել այնպիսի ուխտադրուժ մարդկանց և ճիվաղների հետ, ինչպես Հիտլերն է և Ռիբենտրոպը։ Արդյոք այստեղ Սովետական Կառավարության կողմից սխալ չի՞ թույլ տրվել։ Իհարկե, ոչ։ Չհարձակվելու պակտը խաղաղության պակտ է երկու պետությունների միջև։ Հենց այդպիսի պակտ առաջարկեց մեզ Գերմանիան 1939 թվին։ Կարող էր արդյոք Սովետական Կառավարությունը հրաժարվել այդպիսի առաջարկությունից։ Ես կարծում եմ, որ ոչ մի խաղաղասեր պետություն չի կարող հրաժարվել խաղաղության համաձայնությունից իր հարևան տերության հետ, եթե այդ տերության գլուխ են կանգնած նույնիսկ այնպիսի ճիվաղներ ու մարդակերներ, ինչպես Հիտլերը և Ռիբենտրոպը։ Եվ այդ, իհարկե, մեկ անխախտ պայմանով—եթե խաղաղության համաձայնությունը չի շոշափում ոչ ուղղակի և ոչ էլ անուղղակի ձևով խաղաղասեր պետության տերիտորիալ ամբողջությունը, անկախությունն ու պատիվը։ Ինչպես հայտնի է, Գերմանիայի և ՍՍՌՄ-ի միջև կնքված չհարձակվելու պակտը հենց այդպիսի պակտ էր։

Ի՞նչ շահեցինք մենք Գերմանիայի հետ չհարձակվելու պակտ կնքելով։ Մենք մեր երկրի համար ապահովեցինք խաղաղություն մեկ և կես տարվա ընթացքում և մեր ուժերը հակահարվածի նախապատրաստելու հնարավորություն, եթե ֆաշիստական Գերմանիան ռիսկ աներ հարձակվելու մեր երկրի վրա, հակառակ պակտի։ Այդ մի որոշակի շահում է մեզ համար և կորուստ ֆաշիստական Գերմանիայի համար։

Ի՞նչ շահեց և ինչ տանուլ տվեց ֆաշիստական Գերմանիան, ուխտադրժորեն պատռելով պակտը և հարձակում գործելով ՍՍՌՄ-ի վրա։ Նա դրանով որոշ շահավետ դիրք ձեռք բերեց իր զորքերի համար մի կարճ ժա-

մանակվա ընթացքում։ բայց նա տանուլ տվեց քաղաքականապես, մերկացնելով իրեն ամբողջ աշխարհի աչքում, որպես արյունարբու ագրեսոր։ Չի կարող կասկած լինել, որ այդ կարճատև ռազմական շահումը Գերմանիայի համար լոկ մի էպիզոդ է, իսկ հսկայական քաղաքական շահումը ՍՍՌՄ-ի համար հանդիսանում է մի լուրջ և տևական ֆակտոր, որի հիմքի վրա պետք է ծավալվեն Կարմիր Բանակի վճռական ռազմական հաջողությունները ֆաշիստական Գերմանիայի դեմ մղվող պատերազմում։

Ահա թե ինչու մեր ամբողջ քաջարի բանակը, մեր ամբողջ քաջարի Ռազմա-Ծովային Նավատորմը, մեր բոլոր օդաչու-բաղեները, մեր երկրի բոլոր ժողովուրդները, Եվրոպայի, Ամերիկայի և Ասիայի բոլոր լավագույն մարդիկ, վերջապես, Գերմանիայի բոլոր լավագույն մարդիկ—նշավակում են գերմանական ֆաշիստների ուխտադրուժ գործողությունները և համակրանքով են վերաբերվում Սովետական Կառավարությանը, հավանություն են տալիս Սովետական Կառավարության վարքագծին և տեսնում են, որ մեր գործն արդար է, որ թշնամին կջախջախվի. որ մենք պետք է հաղթենք։

Մեր վզին փաթաթած պատերազմի հետևանքով մեր երկիրը կյանքի ու մահվան զոտեմարտի է բռնվել իր ամենաուժեղ ու նենգ թշնամու—գերմանական ֆաշիզմի հետ։ Մեր զորքերը հերոսաբար կռվում են մինչև ատամները տանկերով ու ավիացիայով զինված թշնամու դեմ։ Կարմիր Բանակն ու Կարմիր Նավատորմը, հաղթահարելով բազմաթիվ դժվարություններ, անձնազոհ կերպով մարտնչում են յուրաքանչյուր թիզ սովետական հողի համար։ Մարտի մեջ են մտնում Կարմիր Բանակի՝ հազարավոր տանկերով ու ինքնաթիռներով զինված գլխավոր ուժերը։ Կարմիր Բանակի զինվորների քաջությունն անօրինակ է։ Թշնամուն հասցվող մեր հակահարվածն ամբանում ու աճում է։ Կարմիր Բանակի հետ միասին հայրենիքը պաշտպանելու համար ոտքի է ելնում ամբողջ սովետական ժողովուրդը։

Ի՞նչ է պահանջվում, որպեսզի վերացնենք մեր հայրենիքի վրա կախված վտանգը, և ինչպիսի միջոցներ պետք է ձեռք առնվեն թշնամուն ջախջախելու համար։

Ամենից առաջ անհրաժեշտ է, որ մեր մարդիկ, սովետական մարդիկ հասկանան այն վտանգի ամբողջ խորությունը, որն սպառնում է մեր երկրին, և հրաժարվեն բարեհոգությունից, անհոգությունից, խաղաղ շինարարության տրամադրություններից, որոնք լիովին հասկանալի էին նախապատերազմական ժամանակաշրջանում, բայց կործանարար են ներկայումս, երբ պատերազմը արմատապես փոխել է դրությունը։ Թշնամին գաժան է և անողոք։ Նա իրեն նպատակ է դնում զավթել մեր քրտինքով ողողված մեր հողերը, խլել մեր հացը և մեր նավթը, որոնք ձեռք են բերված մեր աշխատանքով։ Նա իրեն նպատակ է դնում կալվածատերերի իշխանության վերականգնումը, ցարիզմի վերականգնումը, ռուսների, ուկրաինացիների, բելոռուսների, լիտվացիների, լատիշների, էստոնացիների, ուզբեկների, թաթարների, մոլդավացիների, վրացիների, հայերի, ադրբեջանցիների և Սովետական Միության մյուս ազատ ժողովուրդների ազգային կուլտուրայի և ազգային պետականության կործանումը, նրանց գերմանացումը,

նրանց գերմանական իշխանների ու բարոնների ստրուկներ դարձնելը։ Այսպիսով, խոսքը վերաբերում է Սովետական Պետության կյանքին ու մահվանը, ՍՍՌՄ-ի ժողովուրդների կյանքին ու մահվանը, այն բանին, թե Սովետական Միության ժողովուրդները ազատ պետք է լինեն, թե՞ ընկնեն ստրկության մեջ։ Անհրաժեշտ է, որպեսզի սովետական մարդիկ հասկանան այդ և դադարեն անհոգ լինելուց, որ նրանք մոբիլիզացիայի ենթարկեն իրենց և իրենց ամբողջ աշխատանքը վերակառուցեն նոր, ռազմական ձևով, որը թշնամուն խնայել չգիտե։

Անհրաժեշտ է, այնուհետև, որպեսզի մեր շարքերում տեղ չունենան նվաստներն ու վախկոտները, պանիկյորներն ու դասալիքները, որպեսզի մեր մարդիկ պայքարի մեջ երկյուղ չունենան և անձնազոհ կերպով մեր հայրենական ազատագրական պատերազմին գնան ընդդեմ ֆաշիստական ստրկացնողների։ Մեր պետությունն ստեղծող մեծ Լենինն ասում էր, որ սովետական մարդկանց հիմնական հատկությունը պետք է լինի քաջությունը, խիզախությունը, երկյուղ չգիտենալը պայքարում, ժողովրդի հետ միասին մեր հայրենիքի թշնամիների դեմ կռվելու պատրաստակամությունը։ Անհրաժեշտ է, որ բոլշևիկի այս հոյակապ հատկությունը դառնա Կարմիր Բանակի, մեր Կարմիր Նավատորմի միլիոնավորների ու միլիոնավորների և Սովետական Միության բոլոր ժողովուրդների սեփականությունը։

Մենք պետք է անհապաղ վերակառուցենք մեր ամբողջ աշխատանքը ռազմական ձևով, ամեն ինչ ենթարկելով ֆրոնտի շահերին և թշնամու ջախջախումը կազմակերպելու խնդիրներին։ Սովետական Միության ժողովուրդները տեսնում են այժմ, որ գերմանական ֆաշիզմն անզուսպ է իր կատաղի ոխակալության և իր ատելության մեջ դեպի մեր հայրենիքը, որն ապահովել է բոլոր աշխատավորների ազատ աշխատանքն ու բարեկեցությունը։ Սովետական Միության ժողովուրդները պետք է ոտքի կանգնեն պաշտպանելու իրենց իրավունքները, իրենց հողը ընդդեմ թշնամու։

Կարմիր Բանակը, Կարմիր Նավատորմը և Սովետական Միության բոլոր քաղաքացիները պետք է պաշտպանեն սովետական հողի ամեն մի թիզը, կռվեն մինչև արյան վերջին կաթիլը մեր քաղաքների ու գյուղերի համար, հանդես բերեն մեր ժողովրդին հատուկ համարձակություն, նախաձեռնություն և հնարամտություն։

Մենք պետք է կազմակերպենք բազմակողմանի օգնություն Կարմիր Բանակին, ապահովենք նրա շարքերի ուժեղ համալրումը, ապահովենք նրա մատակարարումն անհրաժեշտ ամեն բանով, կազմակերպենք զորքեր և ռազմական բեռներ փոխադրող տրանսպորտի արագ երթևեկությունը, լայն օգնություն վիրավորներին։

Մենք պետք է ամրապնդենք Կարմիր Բանակի թիկունքը, այս գործի շահերին ենթարկելով մեր ամբողջ աշխատանքը, ապահովենք բոլոր ձեռնարկությունների ուժեղացրած աշխատանքը, ավելի շատ հրացան, դընդացիր, հրանոթ, փամփուշտ, արկ, ինքնաթիռ արտադրենք, կազմակերպենք գործարանների, էլեկտրակայանների, հեռախոսային ու հեռագրական կապի պահպանումը, կարգավորենք տեղական հակաօդային պաշտպանությունը։

Մենք պետք է կազմակերպենք անխնա պայքար թիկունքի ամեն տե-

տակ կազմալուծիչների, դասալիքների, պանիկյորների, լուրեր տարածողների դեմ, ոչնչացնենք լրտեսներին, դիվերսանտներին, թշնամու պարաշյուտիստներին, այդ ամենում արագ օժանդակություն ցույց տալով մեր ոչնչացնող գումարտակներին։ Պետք է նկատի ունենալ, որ թշնամին նենգ է, խորամանկ, փորձված խաբելու և սուտ լուրեր տարածելու մեջ։ Պետք է այս ամենը հաշվի առնել և պրովոկացիաների չենթարկվել։ Պետք է անմիջապես Ռազմական Տրիբունալի դատին հանձնել բոլոր նրանց, ովքեր իրենց պանիկյորությամբ ու վախկոտությամբ խանգարում են պաշտպանության գործին, առանց նկատի ունենալու անձնավորությունը։

Կարմիր Բանակի զորամասերի հարկադրական հետքաշման դեպքում պետք է տանել-հեռացնել ամբողջ երկաթուղային շարժական կազմը, չթողնել թշնամուն ոչ մի շոգեքարշ, ոչ մի վագոն, չթողնել հակառակորդին ոչ մի կիլոգրամ հաց, ոչ մի լիտր վառելանյութ։ Կոլխոզնիկները պետք է քշեն տանեն բոլոր անասուններին, հացը ի պահպանություն հանձնեն պետական օրգաններին թիկունքային շրջանները փոխադրելու համար։ Ամբողջ արժեքավոր գույքը, որոնց թվում գունավոր մետաղները, հացը և վառելանյութը, որը չի կարող տեղափոխվել, պետք է անպայման ոչնչացվի։

Թշնամու գրաված շրջաններում պետք է ստեղծել ձիավոր ու հետևակ պարտիզանական ջոկատներ, ստեղծել դիվերսիոն խմբեր թշնամու բանակի զորամասերի դեմ կռվելու համար, պարտիզանական պատերազմ բորբոքելու համար ամեն տեղ ու ամենուրեք, կամուրջները, ճանապարհները պայթեցնելու, հեռախոսային ու հեռագրական կապը փչացնելու համար, անտառները, պահեստները, գումակները հրկիզելու համար։ Գրավված շրջաններում ստեղծել թշնամու և նրա բոլոր աջակիցների համար անտանելի պայմաններ, հետապնդել և ոչնչացնել նրանց ամեն քայլափոխում, վիժեցնել նրանց բոլոր միջոցառումները։

Ֆաշիստական Գերմանիայի դեմ մղվող պատերազմը չի կարելի սովորական պատերազմ համարել։ Նա միայն երկու բանակների միջև մղվող պատերազմ չէ։ Նա միաժամանակ ամբողջ սովետական ժողովրդի մեծ պատերազմն է գերման-ֆաշիստական զորքերի դեմ։ Ֆաշիստական կեղեքիչների դեմ մղվող համաժողովրդական այս հայրենական պատերազմի նպատակն է ոչ միայն վերացնել մեր երկրի վրա կախված վտանգը, այլև օգնել Եվրոպայի բոլոր ժողովուրդներին, որոնք հեծում են գերմանական ֆաշիզմի լծի տակ։ Այս ազատագրական պատերազմում մենք մենակ չենք լինի։ Այս մեծ պատերազմում մենք հավատարիմ դաշնակիցներ կունենանք հանձինս Եվրոպայի և Ամերիկայի ժողովուրդների, այդ թվում ի դեմս գերմանական ժողովրդի, որին ստրկացրել են հիտլերյան պարագլուխները։ Մեր հայրենիքի ազատության համար մղվող մեր պատերազմը կմիաձուլվի Եվրոպայի և Ամերիկայի ժողովուրդների պայքարի հետ հանուն իրենց անկախության, հանուն դեմոկրատական ազատությունների։ Այդ կլինի ազատության կողմակից ժողովուրդների միասնական ֆրոնտ ընդդեմ ստրկացման և ստրկացման սպառնալիքի՝ Հիտլերի ֆաշիստական բանակների կողմից։ Այս կապակցությամբ Մեծ Բրիտանիայի պրեմյեր պ. Չերչիլլի պատմական ելույթը Սովետական Միությանն օգնելու մասին և ԱՄՆ-ի կառավարու-

թյան դեկլարացիան մեր երկրին օգնություն ցույց տալու պատրաստակամության մասին, որոնք կարող են միայն երախտագիտության զգացում առաջ բերել Սովետական Միության ժողովուրդների սրտերում,—միանգամայն հասկանալի են և ցուցանշական։

Ընկերներ։ Մեր ուժերն անհամար են։ Ամբարտավանացած թշնամին շուտով կհամոզվի դրանում։ Կարմիր Բանակի հետ միասին պատերազմի են ելնում հարձակվող թշնամու դեմ բազմահազար բանվորներ, կոլխոզնիկներ, ինտելիգենցիա։ Ոտքի կելնեն մեր ժողովրդի միլիոնավոր մասսաները։ Մոսկվայի և Լենինգրադի աշխատավորներն արդեն ձեռնարկել են բազմահազար ժողովրդական աշխարհազոր ստեղծելու՝ Կարմիր Բանակին աջակցելու համար։

Յուրաքանչյուր քաղաքում, որին սպառնում է թշնամու արշավանքի վտանգը, մենք պետք է այդպիսի ժողովրդական աշխարհազոր ստեղծենք, պայքարի հանենք բոլոր աշխատավորներին, որպեսզի գերմանական ֆաշիզմի դեմ մղվող մեր հայրենական պատերազմում մեր կրծքով պաշտպանենք մեր ազատությունը, մեր պատիվը, մեր հայրենիքը։

Ուխտադրժորեն մեր հայրենիքի վրա հարձակված թշնամուն հակահարված տալու նպատակով ՍՍՌՄ ժողովուրդների բոլոր ուժերն արագորեն մոբիլիզացիայի ենթարկելու համար ստեղծված է Պաշտպանության Պետական Կոմիտե, որի ձեռքում է կենտրոնացրած այժմ ամբողջ իշխանությունը պետության ներսում։ Պաշտպանության Պետական Կոմիտեն անցել է իր աշխատանքին և կոչ է անում ամբողջ ժողովրդին համախմբվելու Լենինի—Ստալինի պարտիայի շուրջը, Սովետական Կառավարության շուրջը՝ Կարմիր Բանակին և Կարմիր Նավատորմին անձնվեր աջակցություն ցույց տալու համար, թշնամուն ջախջախելու համար, հաղթության համար։

Մեր բոլոր ուժերը՝ մեր հերոսական Կարմիր Բանակին, մեր փառապանծ Կարմիր Նավատորմին աջակցելու։

Ժողովրդի բոլոր ուժերը՝ թշնամուն ջախջախելու համար։

Առաջ, հանուն մեր հաղթության։